

պետութիւնը մասնակցած է Հայ վաճառականներու շարժումներուն՝ ի հարկին, դիմելով բարձր իշխանութեանց, չէզոքացնելու համար հրամանադիրներ, որոնք Հայ վաճառականներուն առեւտուրին կը սպառնային:

Էջմիածնայ Դիւանը գուցէ ունենայ նման դէպքերու առթիւ տրուած յիշատակադիրներ, աղերսադիրներ, յիշատակութիւններ, որոնց լոյս տեսնելով կրնայ իր կարգին մեծապէս օգտակար ըլլալ:²⁾

Էլթընի վկայութեան այն մասը, ուր կ'ըսուի թէ Հայոց Հայրապետը դիմում կատարեց՝ մասնակցելով Հայ վաճառականներու Անգլիացուց դէմ մրցակցութեան, ինձի ենթադրել կուտայ, որ 1711-ին Մեծն Պետրոսի եւ Հայ հում մետաքսի վաճառականներուն միջեւ կայացած համաձայնութեան եւ այդ թրուականին Պարսից Ծահէն Պարսկական մետաքսի մենաշնորհը Հայ վաճառականներուն համար ստանալու գործին մէջ դարձեալ Հայոց ժամանակին Հայրապետը, Աղեքսանդր Ա. Կաթողիկոս Զուղայեցին (1706-1714), ոչ միայն դեր կատարած է, այլ նոյնիսկ միջնորդ եղած է թէ՛ Ռուսական եւ թէ՛ Պարսկական կառավարութեանց պետերուն միջեւ: Որովհետեւ Հայ կրօնապետութիւնը Հայ, նոյնիսկ օտար՝

թուրք, Պարսիկ վաճառականներուն համար կը կատարէր դրամատան պաշտօն, կ'ընէր դրամատան փոխանցումներ, գանձումներ, յանձնումներ, եւ կամ ստացումներ: Հայաստանի եւ գաղութներու եկեղեցիները երբեմն դեռ կը պահեն տրցակներ փոխատուութեան մուրհակներու: Էջմիածին իրապէս մեծ մուտք մը ունէր Հայ վաճառականներէն, մասնաւորաբար մետաքսի Հայ վաճառականներէն:

Աւելի առաջ արդէն օտարի վկայութեամբ ցոյց տուի այն կարեւոր դերը, որ Էջմիածնայ վանքը կը խաղար իր կաթողիկոսով, անցուղարձ ընող Հայ վաճառականներուն համար: Միացման գլխաւոր կեդրոն մըն էր Էջմիածինը հեռաւոր Հնդկահայ եւ Հոլանդահայ վաճառականներուն համար եւ, անտարակոյս, եղած է նաեւ իբր վէճեր հարթող ոչ միայն Հայ վաճառականներուն միջեւ, այլ եւ օտար պետութեանց մօտ Հայ վաճառականին ի նըպաստ:

Էջմիածնայ այս կարեւոր պաշտօնը ցարդ մեր ձեռնահաս գրողներէն ոչ մէկէն նկատի առնուած եւ իր ամբողջութեան մէջ ուսումնասիրուած է: Ատրկա ընելու համար՝ անպայման աշխատողին համար Էջմիածնայ ամենաթանկագին դիւանը ամբողջութեամբ պէտք է: Ասկէ զատ, պէտք է ուսումնասիրուին գաղութներու այն եկեղեցական դիւանները, որոնք դեռ կը մնան: Դիւրին աշխատութիւն մը չէ ըլլալիքը, սակայն խիստ կարեւոր:

Էլթընը համակիրներ գտաւ նոյնիսկ Անգլիոյ մէջ: Անգլիոյ թագաւորին ներկայացուած գրութիւնը, սակայն, յանձնարարականի մը մէջ՝ գրուած 1740-ին նոյեմբեր 11-ին White hall՝ թագաւորին կը յանձնարարուի Էլթընի ծրագիրը, որովհետեւ, «Ռուսիոյ վրայով Պարսկաստանի հետ առեւտուր, արդարեւ, գործնական է, որովհետեւ նոյնը այժմ կը կատարուի Հայոց կողմէ Հոլանտայի եւ Պարսկաստանի միջեւ, Ռուսական պետութեան մէջէն»:¹⁾

Այս յանձնարարագիրը յառաջ կը բերէ կարգ մը ուրիշ պատճառներ ալ հում մետաքս-

2) Դժբախտաբար, այս մասին համար կարեւոր Գ. Ք. Աղանեանի ԴԻԻԱՆ ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ հատորները կը պակսին ինձ այժմ: Հոն կան կարեւոր փաստեր, օրինակ՝ Դիւանի Դ. գրքին մէջ Ղուկաս կաթողիկոսի նիւթերուն հետ կը կարդանք. «Աքլասֆն երկու ցեղք են. զմի ցեղն Վենետիոյ գրէ ի սիւսիւտն, որ իբր թէ լաւն է, բայց զին դնէ տեղւոյ Ա. Կաղին ԲՌԵՃ (2,500) դն. (դիւան կամ հաղարդիւան, պարսիկ մանր գրամ: Յ. Ք.) ոմանց կտորիցն եւս ԲՌ. (2,000) դն. որք թանգ են յոյժ: Զմիւս ցեղն սուրմալի փրանկի աքլազ կոչէ, որ իբրեւ քաւքայ է եւ գին դնէ Ա. Կաղին (պարսիկ կանդնաչափ: Յ. Ք.) որ ոչ արժէ»: (Էջ 613) Ղուկաս կաթողիկոսը Կարնեցին է, որ զահակալեց 1780-1799:

Դարձեալ Բ. հատոր գրաբաններու կարգին՝ «Ապրիլուսի գինն Կարբեցուց»:

1) Անդ՝ էջ 35: